

ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Խ. Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Միջնադարյան Հայաստանում, որպես կանոն, դատավարություն կարող էր սկսվել այն ժամանակ, երբ շահագրգռված կողմը դիմում էր դատարանին, այլ կերպ ասած՝ դատավարության հիմքում ընկած էր մասնավոր մեղադրանքի սկզբունքը: Այս դատողությունը հիմնված է, մասնավորապես, Մխիթար Գոշի Դատաստանագրքի տվյալների վրա. «Եթէ ոք զոք ըմբռնէ ի դատաստան իրրեւ պարտական կամ այլ ինչ... Ապա թէ ոք ըմբռնի ի գողութեան, կամ ի շնութեան, կամ ի սպանութեան, կամ յաւաղակութեան կասկածանս...»¹: Եթե բացառենք որոշ գործեր, որոնց մասին կխոսվի ստորև, նույնիսկ ակնհայտ հանցագործության դեպքում դատական հետապնդում չէր կարող սկսվել, եթե ոչ ոք հանդես չէր գալիս որպես մեղադրող: Մեղադրողի դերում կարող էին հանդես գալ տուժողը և նրա մերձավոր ազգականները: Պետք է ենթադրել, որ որոշ դեպքերում մեղադրողի դերը կարող էր ստանձնել յուրաքանչյուր քաղաքացի:

Անհատապես ոչ ոքի դեմ չոտնձգող, բայց ընդհանուրի շահը խախտող հանցագործությունների դեպքում, եթե մասնավոր մեղադրող չկար, հետապնդման նախաձեռնությունը վերցնում էին իշխանության մարմինները: Այս տեսակետից խիստ ուշագրավ է Մովսես Խորենացու մի վկայությունը: Պատմահայրը հաղորդում է, որ Վաղարշակ թագավորը «օրէնս իմն հաստատէ ի տան թագաւորութեան իւրոյ... եւ յիշեցուցանողս երկուս ի ձեռն գրոյ այլ ոմն զբարի յիշողութիւնս ատենլով, և այլ ոմն զվրէժխնդրութեանցն»²: Տվյալ դեպքում մեղ հետաքրքրում է երկրորդ պաշտոնյան, որի կոչումը, ինքնին, արդեն պարզում է այն բառը, որով պատմագիրը բնութագրում է նրա պարտականությունը՝ վրեժխնդրություն: Այս պաշտոնյան պարտավոր էր ամեն անգամ գրավոր հիշեցնել արքային վրեժխնդրության անհրաժեշտության մասին, այսինքն՝ հարց էր բարձրացնում քրեական հետապնդում սկսելու, գործ հարուցելու մասին: Վրեժխնդրության մասին գրավոր հիշեցնողն, այսպիսով, ներկայանում է որպես մի գլխավոր դատախազ կամ լավ է ասել՝ հանրային-պետական մեղադրող, որը պարտավոր էր ի պաշտոնե, ex officio, հետապնդում սկսելու հանցագործի դեմ կամ հանցագործության փաստի առթիվ: Իհարկե, չպետք է կարծել, թե հանրային պետական մեղադրողը հետապնդում էր սկսում ամեն մի հանցագործության կապակցությամբ: Նրա հանդես գալու առիթները, առաջին հերթին, հավանաբար, այն արարքներն էին, որոնք ուղղված էին թագա-

1 «Մխիթարայ Գոշի Դատաստանագիրք հայոց», իրաւաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթութեամբ: Վահան Ժ. վարդապետի Բաստամեանց, Վաղարշապատ, 1880, էջ 54: Այսուհետև՝ Դատաստանագիրք հայոց:

2 «Մովսիսի Խորենացոյ պատմութիւն հայոց», Տփղիս, 1913, II, 8, էջ 117:

վորի «զանձի» ու գահի դեմ և այլն, ընդհանրապես այն գործերը, որոնք ընդդատյա էին թագավորի դատարանին³:

Կողմերն իրենք էին ներկայանում դատարան կամ մեկը դատարանի առաջ էր բերում մյուսին: Եթե տուժողը չէր կարողանում դատարանին ներկայացնել մեղադրյալին, վերջինիս դիմադրության կամ այլ պատճառով, ասյա իշխանության մարմինները համապատասխան միջոցներ էին ձեռնարկում: Հայագիտական դրականության մեջ իրերի վիճակը ներկայացվել է այնպես, որ իբր «բրեական գործերում իշխանության մարմինները երբեք ինքեանք միջոցներ ձեռք չէին առնում ոճրագործին հետապնդելու»⁴: Ստացվում է այնպես, որ անձամբ ուժեղ և տոհմայիններով զորեղ մի ոճրագործ միշտ էլ կարող էր խուսափել դատից ու պատժից, եթե տուժողը կամ ինքյամբ կամ տոհմայիններով տկար էր, սակավուժ: Միջնադարում՝ ընդհանրապես, Հայաստանում՝ մասնավորապես, իհարկե, գործել է «սահման քաջաց զէն իւրեանց» չգրված օրենքը՝ զորեղի իրավունքը, որ նսեմացնում էր իրավունքի զորությունը: Բայց ալո օրենքի ուժն ու ծավալը նախ՝ միշտ պայմանավորված էր բուն պետական իշխանության ուժով, դրանք հակադարձ համեմատական մեծություններ էին: Երկրորդ՝ այդ օրենքը ավելի շուտ ավատատիրական-տերուական էր, քան ընդհանուր քաղաքացիական: Երբ կողմերը շինականներ էին, այդ օրենքը չէր կարող գործել իր ամբողջ ծավալով, թեկուզ այն պատճառով, որ կենտրոնական կամ տեղական իշխանությունները միշտ էլ բավարար չսփռվ ուժ ունեին զսպելու նրանց: Բնչևէ. փաստերը հաստատում են, որ իշխանության մարմինները միջոցներ էին ձեռնարկում հանցագործին հետապնդելու, երբ դրա կարիքը զգացվում էր: Այս կարգի մի փաստի հետ, որ հաղորդում է պատմահայրը, արդեն ծանոթացանք. բերենք մի քանիսր ևս: Եզնիկ Կողբացին գրում է. «Տեսանեմք՝ թէ թագաւորն զիւրոց օրինաց վրէժս պահանջէ, և պահանջմամբ վրիժուցն զվնասն կարճէ և դատաւորն զզողն և զաւագակն պրկէ և քերէ՝ վասն զվնասակարութիւնն ի միջոյ բառնալոյ, և հայր զորդի դժնեայ մահապարտեալ՝ դատաւորաց մատնէ, և այլքն ամենեքեան զիւրաքանչիւր զանցնիւր զանարգանաց վրէժս պահանջեն՝ կամ անձամբ կամ իշխանօք»⁵: Թագավորն ինքն է իր օրենքների խախտման համար վրեժ պահանջում, ուրեմն՝ ինքն էլ հետապնդում է հանցագործին: Առհասարակ, տուժողը վրեժխնդիր է լինում կամ անձամբ կամ, եթե դա հնարավոր չէ, «իշխանօք», իշխանի միջոցով: Մի ուրիշ փաստ: Ասողիկը հաղորդում է. «Եւ յաւուրս հօր սորա (կարսի թագավոր Աբասի հօր՝ Մուշեղի ժամանակ—Խ. Թ.) ոչ միայն ի ճանապարհս և ի բացեայ տեղիսն կողոպտէին այլ ի նոյն ինքն ի քաղաքին՝ յերեկոյացեալ ժամուն... Այլ սա ինքնին վրէժխնդիր եղեալ, եւ զգտեալ զողսն անաշառ մահու դատապարտեալ՝ ոչ խնայելով ի մեծս կամ ի փոքս յիշխանս կամ ի շինականս»⁶: Ինչպես տեսնում ենք, թագավորն անձամբ էր զլխավորում սլաքարը հանցագործությունների դեմ: Մի վերջին փաստ ևս. «Մի մեռանիցին հարքն

³ Խորենացու քննվող վկայության արժանահավատության ու ընդհանրապես տվյալ հարցի մասին ավելի մանրամասն տե՛ս մեր դիսերտացիոն աշխատությունը՝ «Դատարանակազմությունն ու դատավարությունը միջնադարյան Հայաստանում ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի»:

⁴ Խ. Ս ա մ ու լ յ ա ն, Մխիթար Գոշի Դատաստանագիրքն ու հին հայոց քաղաքացիական իրավունքը, Վիեննա, 1911, էջ 149:

⁵ «Սզնրկայ վարդապետի Կողբացոյ Եղծ աղանդոց», Թիֆլիս, 1914, Ա, ԺԵ, էջ 43:

⁶ «Ստեփաննոսի Ասողկայ Պատմութիւն տիեզերական», Փարիզ, 1859, Գ, ԺԷ, էջ 183—184:

ընդ որդուց և մի որդիք մեռանիցին ընդ հարանց. իւրաքանչիւր ոք ի մեղս իւրում մեռցի: Եւ զայս ասէ յաղագս այնորիկ՝ որ թէ պատահի մահապարտ լինել ըստ օրինաց, հարք թեւ կամիցին վասն զորդիսն ապրեցուցանելոյ մեռանի՝ մի մեռցին, այլ մեռցի որդին մահապարտ, զի մի թիւրեւցի դատաստանն: Նմանապես և մի որդիք ընդ հարց մեռցին: Նաև զատաւոր⁷ քէ ոչ կաւասցեն զորդիս մահապարտս ըմբռնել՝ և ոչ պարտին զհայր ի մահ դատապարտել: Եւ այս ի մեղ հաստատուն կացցի»⁸: Այսպիսով, իշխանության մարմինները միջոցներ էին ձեռնարկում, երբ դրա անհրաժեշտությունը կար, մեղադրյալին դատարանի առաջ կանգնեցնելու համար:

Երբ կողմերը կանգնում են դատարանի առաջ, սկսվում է դատաքննությունը, որին անդրադառնալուց առաջ անհրաժեշտ է նշել, որ Դատաստանագիրքը դեթ մի կեսում որոշակիորեն տարբերում է քրեական և քաղաքացիական դատավարությունները: Մխիթար Գոշը հստակորեն դանդաղում է իրավախախտողին «Իբրև պարտական կամ այլ ինչ»⁹ իրավախախտողից, որ «ըմբռնի ի գողութեան, կամ ի շնութեան, կամ ի սպանութեան, կամ յաւաղակութեան»⁹: Գոշն, այսպիսով, սահմանադատում է քաղաքացիական իրավահարաբերությունը քրեա-իրավական հարաբերությունից, քաղաքացիական գործը՝ հանցագործությունից: Այդ տարբերությունը պետք է արտահայտվել համապատասխան գործերի քննության դատավարական կարգի մեջ: Ծիշտ է, դատավարական կարգը բավական պարզ է, որպեսզի քաղաքացիական և քրեական գործերի դատաքննության եղանակների մեջ տարբերիչ հատկանիշների քանակը զգալի լինի, բայց, նախ, դրանց մի մասը միշտ առկա է, իսկ մյուսը հանդես է գալիս որոշակի հանգամանքներում:

Ըստ Դատաստանագրքի, քրեական իրավախախտումների կարգավորման յուրահատուկ միջոցը պատիժն է, որպես տիրապետող դասակարգի համար առավել վտանգավոր արարքների դասակարգային ճնշման ձև: Քրեական իրավախախտումների ժամանակ դատի նպատակը ոչ թե տուժողի նախկին վիճակը վերականգնելու, այսինքն՝ նրա կրած նյութական վնասը (եթե եղել է) փոխհատուցելու մեջ է, այլ հանցագործին պատժելու, նրան իր կարևորագույն բարիքներից, ներառյալ և կյանքից զրկելու մեջ, հասցված վնասի փոխհատուցմամբ հանդերձ: Քաղաքացիական իրավախախտումների դեպքում, ընդհակառակը, պատիժը որպես կարգավորման միջոց ընդհանրապես բացակայում է, և դատաքննության նպատակը հանգում է հայցվորի նախկին վիճակը վերականգնելուն:

Այն դեպքերում, երբ հետապնդվում էր վերը նշված նպատակներից առաջինը, Դատաստանագրքում սահմանված են դատավարական այնպիսի նորմեր, որոնք, առհասարակ, կիրառելի չեն քաղաքացիական գործերով: Հիշենք Մխիթար Գոշի ծանոթ դրույթն այն մասին, որ հայտնի չարերին՝ գողերին, ավաղակներին, մարդասպաններին և այլն պետք չէ դատաստան: Մի առիթով մենք արդեն ցույց ենք տվել, որ նման գործերով դատավարությունը կարող էր լինել *extra ordinem* — արտակարգ: Ըստ Դատաստանագրքի քաղաքացիական գործերով արտակարգ դատավարություն չէր լինում:

⁷ Դատաստանագիրք հայոց, էջ 396, հոդված II, 84:

⁸ Նույն տեղում, էջ 54:

⁹ Նույն տեղում:

Մխիթար Գոշի իրավարմբոնմամբ հանցագործի ու տուժողի հետագա վարքագիծը, ըստ երևույթին, չի վերացնում արարքի հանցավորությունը և, թերևս այդ պատճառով, Դատաստանագրքից չի երևում, որ քրեական գործերով դատավարության ժամանակ կողմերի հաշտությունը միշտ կարող էր գործը կարճելու առիթ դառնալ։ Այնինչ, քաղաքացիական գործերի դեպքում կողմերի հաշտությամբ դատաքննությունը ավարտվում էր։

Գոշը որոշակիորեն նշում է քրեական և քաղաքացիական դատավարությունների հետևյալ տարբերությունը. «Եւ եթէ ոք զոք ըմբռնէ ի դատաստան իրրև պարտական կամ այլ ինչ, եւ ինքն վկայ ոչ ունիցի եւ ոչ այն որ ըմբռնեցաւ, պարտ է տալ զերդումնն ոչ այնմ որ ըմբռնեացն, այլ որ ըմբռնեցան... Ապա թէ ոք ըմբռնի ի գողութեան, կամ ի շնութեան, կամ ի սպանութեան... Եւ որ ըմբռնեացն վկայ ոչ ունի, պարտ է ըմբռնողին տալ զերդումնն»¹⁰։ Մխիթար Գոշի այս իրավանորմը իր ամբողջության մեջ տեղ-տեղ կորցնում է իրավական-իրավաբանական չափանիշը։ Եթե անտեսենք դա, ապա նորմի ընդհանուր պարտավորիչ արժեքը հետևյալն է. քաղաքացիական գործերով, այն դեպքում, երբ կողմերից ոչ մեկը վկա չունի, երդումը տրվում է պատասխանողին։ Քրեական գործերով, նույն պայմաններում, երդումը տրվում է մեղադրողին։ Քանի որ, ըստ Դատաստանագրքի, երդումը դատավարական զուտ արտաքին ձևականություն չէ, այլ վճռական ապացույց, որով նշված դեպքերում որոշվում էր գործի ելքը, ուստի վճռական էր նաև դատաքննության այն պահը. երբ լուծվում էր երդման նախապատվություն տալու հարցը։ Հենց դրանով էլ դատավորները գործնականում վճռական տարբերություն էին դնում քրեական և քաղաքացիական դատավարությունների միջև։

Ընդգծենք մի տարբերություն ևս, որ կապված է նախորդի հետ. նշված դեպքում, քաղաքացիական գործերով դատավարության ժամանակ, ապացույցման բեռն ընկնում է պատասխանողի վրա, իսկ քրեականի ժամանակ՝ մեղադրողի վրա, թեև, ընդհանրապես, կողմերից յուրաքանչյուրը ապացուցում է իր ասածը։

Դարձյալ իրերի նշված վիճակը նկատի ունենալով (երբ կողմերից ոչ մեկը վկա չունի), քաղաքացիական վեճերի դեպքում, թվում է, գործում էր (եթե կարելի է այսպես արտահայտվել) «անմեղության» նախավարկածը, իսկ քրեականի դեպքում՝ կասկածյալի մեղավորության նախավարկածը։

Նշված և մի քանի այլ առանձնահատկություններն, այսպիսով, ցույց են տալիս, որ Դատաստանագիրքը տարբերում է քրեական և քաղաքացիական դատավարությունները, և այս տեսակետից նրա հեղինակն ու այն ժամանակվա հայկական հասարակությունը, նույնիսկ Եվրոպայի համեմատությամբ, մեծապես շահում են իրենց իրավաբանական զարգացման աստիճանով։

Եթե նկատի չառնենք վերը նշված տարբերությունները, երկու բնույթի գործերի դատաքննությունը ընթանում էր միևնույն եղանակով։

Գործի քննությունը, որպես կանոն կամ վեճերի մեծամասնության համար, դատաքննություն էր նշանակում և այն կարող էր սկսվել կողմերից մեկի դիմումի հիման վրա։ Դիմումը, սովորաբար, բանավոր էր, բայց չի բացառվում, որ այն կարող էր լինել նաև գրավոր։

¹⁰ Նույն տեղում, էջ 53—54։

Դատարանի կողմից դիմումն ստանալու պահին ու դատաքննությունը կարող էին լինել միաժամանակ, բայց կարող էին և բաժանված լինել ժամանակով: Վերջին դեպքում դատարանը նշանակում էր դատաքննության օրը: Գրականության մեջ այն կարծիքը կա, որ «դատավորները հենց տեղում են առաջին անգամ լսում դատվող կողմերի զանգատները և հենց այդտեղ էլ իսկույն վճիռներ արձակում»¹¹: Այս կարծիքը իր երկու կետերով էլ չի համապատասխանում այն վիճակին, որ ներկայացնում է Դատաստանագիրքը: Վճռահատությունը կանգրագառնանք ստորև, իսկ մինչ այդ ուշադրություն դարձնենք Նախադրության հետևյալ հատվածի վրա. «Եւ դատաւորն մի լուիցէ՛ զոսոխին կամ զդատախաղին բանսն միայն, եւ թէ լուիցէ՛ այսչափ միայն լիցի զի ուսցի զբանսն, բայց վճիռ մի հատցէ մինչեւ երկուքն դէմ ընդ դէմ միմեանց լիցին»¹²: Իհարկէ, կարող էին լինել դեպքեր, երբ դատավորները, առաջին անգամ իսկ տեսնելով ու լսելով կողմերին, տեղն ու տեղը վճիռ էին արձակում: Բայց մեջբերումից ակնհայտ է, որ դատավորը կարող էր նաև նախապես լսել կողմերին, ծանոթանալ նրանց փաստարկներին և այլն, մի խոսքով՝ դատավորը մինչ դատաքննությունը կարող էր ծանոթանալ գործին:

Նշանակված օրը կողմերը ներկայանում էին դատարան: Կողմերից մեկի բացակայության դեպքում, որպես կանոն, դատաքննություն տեղի չէր ունենում:

Կողմերը պետք է ներկա լինեին անձամբ: Նրանց փոխարինելը կամ ներկայացուցչությունը չէր թույլատրվում (որոշ բացառություններով): Դա հաստատվում է, նախ, Մխիթար Գոշի այն պահանջով, որ դեմ-դիմաց պետք է լինեն «երկուքը», այսինքն՝ վիճողներն անձամբ, երկրորդ՝ Գոշը դեմ է դատապաշտպանների հաստատությանը: Նա գրում է. «Մի բնաւ ի վարձու կալցին զատենախոս ճարտասան մարդս եւ ստույթեամբ յաղթեսցին ի դատաստանի»¹³: Բացասական այս դատողությունից, ի միջի այլոց, հետևում է զրական այն եզրակացությունը, որ ժողովրդի իրավական կյանքում տարածված էր վարձով իրավաբանական ծառայություններ ստանալու երևույթը, մասնավորապես կային ատենախոս ճարտասաններ, որոնք հանդես էին գալիս դատապաշտպանների դերում: Դատապաշտպանների նկատմամբ մի այսպիսի բացասական կարծիք, ինչպիսին Գոշին է, կարող էր առաջանալ նրանց քիչ թե շատ տեական գործունեության փորձի ընդհանրացումից: Սակայն նախընթաց զարգացման շատ ավելի երկար ժամանակ էր պետք, որպեսզի առաջանար փաստաբանների հաստատությունը: Այս նկատառումները հնարավորություն են տալիս ենթադրելու, որ փաստաբանների հաստատությունը Գոշի ժամանակ վաղուց արդեն գոյություն ունեցող իրողություն էր և գալիս էր, հավանաբար, Բագրատունիների շրջանից:

Մխիթար Գոշը դեմ է դատապաշտպաններին: Առաջին հայացքից կարող է թվալ, թե նա առհասարակ դեմ է իրենից դեռ շատ դարեր առաջ արդեն յուրացված իրավական այն գլխավոր սկզբունքներից մեկին, որով մարդը կարող է իր իրավունքների պաշտպանությունը հանձնել ուրիշին: Սակայն այդպես չէ: Թյուրիմացության նպաստողն այն է, որ դժվար է անմիջապես պատասխա-

¹¹ Խ. Ս ա մ ու Լ յ ա ն, Մխիթար Գոշի Դատաստանագիրքը, էջ 149:

¹² Դատաստանագիրք հայոց, էջ 29:

¹³ Նույն տեղում, էջ 35:

նել հետևյալ հարցերին. Գոշն, առհասարակ, դե՞մ է ներկայացուցչության սկզբունքին և այդ պատճառով չի՞ ընդունում ներկայացուցիչներին (դատապաշտպաններին), թե՞ դեմ է իրենց արատավորած ներկայացուցիչներին և այդ պատճառով չի՞ ընդունում նման ներկայացուցչությունը: Անշուշտ վերջինը: Մխիթար Գոշը սահմանում է. «Իսկ այնոցիկ, գոր ասացաք յառաջ թէ՛ չէ պարտ երդնուլ (անշափահասներին, ծերերին, հիվանդներին և այլն— Խ. Թ.) թե իցեն նոցա հայր կամ եղբայր կամ որդիք, եւ կանացն՝ մայր եւ քոյր կամ եղբայր, կամ այլ սիրելի կամ մերձաւորք, նոքա երդուիցեն... Կրօնաւոր քահանայ եւ մոնոզոն մի մտցին ի դատաստան, զի մի արկ լիցի երդման. այլ թէ հարկ լիցի դատաստանի, ազդականք նոցա լցցեն զտեղի նոցա եւ ընկալեալ լիցին ի դատաւորաց...»¹⁴:

Այսպիսով, ներկայացուցչության իրավունքը Գոշը սահմանափակում է երկու կետով. միայն որոշակի անձինք կարող են նշանակել (ունենալ) ներկայացուցիչներ և միայն որոշակի անձինք կարող են լինել ներկայացուցիչներ:

Դատաքննությունը հրապարակային էր՝ դռնբաց ու բանավոր: Բանավոր ասելով չենք բացառում, որ դատաքննության ընթացքը կամ առանձին դրվագներ երբեմն կարող էին դրի առնվել: Դատախոսության կարգի մասին Մխիթար Գոշը դրում է. «Զի մին խօսեսցի եւ միւսն լուռ կայցէ, եւ ապա նմա խօսել եւ ընկերին լուռ»¹⁵: Արձանագրվում էին զլխավորապես այն գործերն ու վճիռները, որոնք դատական նախադեպի նշանակություն կարող էին ունենալ, այսինքն այն դեպքերը, որոնք անցնում էին դատական գործերի միապաղաղ սովորականությունից և որոնցով կայացված վճիռները կիրառվելու էին նաև ապագայում համանման դիպվածների կապակցությամբ, դատական փորձի միօրինակությունը պահպանելու համար:

Դատաքննությունն սկսվելուց առաջ դատարանն ու կողմերը գրավում էին իրենց հատուկ տեղերը. կենտրոնում, ավելի բարձր՝ դատարանը, ներքևում, ավելի ցածր, դատավորի աջ ու ձախ կողմերում՝ վիճողները ծնկաչոք վիճակում, ինչպես նկարագրում է Գրիգոր Տաթևացին, և ինչպես պատկերված է Լևոն թագավորի հայտնի նկարում:

Մինչ բուն դատաքննությանն անցնելը դատարանը փորձում էր հաշտեցնել կողմերին, գործը վերջացնել սիրով-խաղաղությամբ:

Դատաքննությունը պետք է ընթանար տեղին պատշաճ կարգ ու կանոնի պայմաններում: «Եւ թէ ոսոխքն յատենի անդ բանակոի լիցին՝ մի տացեն թոյլ, այլ սաստեսցեն, զի մի ամբոխ եւ խռովութիւն լիցի յատենին եւ խափանումն դատաստանին»¹⁶: Իր անմիջական տրամադրության տակ դատարանն, ըստ երևույթին, ուներ հատուկ պաշտոնյաներ տեղում կարգ ու կանոնի վրա հսկելու համար:

Դատաքննությունն սկսվում էր կողմերի դատախոսությամբ: Առաջինը խոսում էր, հավանաբար, հայցվորը, հետո պատասխանողը: Այնուհետև հարցաքննվում էին վկաները և քննվում մյուս ապացույցները: Դատաքննության ընթացքում ընդհանրապես և վկաներին հարցաքննելիս՝ մասնավորապես, դատարանը շատ ակտիվ էր լինում:

¹⁴ Նույն տեղում, էջ 55—56:

¹⁵ Նույն տեղում, էջ 32:

¹⁶ Նույն տեղում, էջ 31—32:

Կողմերը կարող էին վկաներին բացարկ հայտնել, մասնավորապես Դատաստանագրքում նշված այն դեպքերում, երբ անձն առհասարակ չէր կարող վկա լինել:

Իատարանի առաջ կողմերը լիովին հավասար էին, անկախ նրանց սոցիալական դիրքից ու դասային աստիճանակարգությունից: Հարց է, թե որքանով իրական էր այս սկզբունքը, համենայն դեպս, օրենքով այդպես էր:

Բուն դատաքննությանը հաջորդում էր դատավարության այն փուլը, որ վճռահատություն է կոչվում: Վճիռը կարող էր հրապարակվել դատաքննության ավարտից անմիջապես հետո, ինչպես գրում է պրոֆ. Խ. Սամուելյանը, գուցե և կարճատև խորհրդակցությունից հետո, բայց դատաքննության ավարտն ու վճռի հրապարակումը կարող էին նաև քիչ թե շատ տևական ժամանակով անջատված լինել իրարից: «Այլեւ երկայնամիտ եւ ներող լիցին դատաւորք,— գրում է Մխիթար Գոշը,— զի բազում անգամ պատահէ զի դժուարագիտ եւ անյայտ լիցի դատաստանն. մի կարճամտեալ լուծցեն, այլ համբերելով պահեսցեն զաւուրս եւ պարապով քննեալ դարձեալ ատենիւ կտրեսցեն զդատաստանն»¹⁷:

Վճիռը ապացույցների հանրագումարն է: Վճռի որակը մեծապես պայմանավորված է ապացույցների որակով: Այդ պատճառով Դատաստանագիրքը մեծ տեղ է հատկացնում ապացույցներին: Ըստ Մխիթար Գոշի Դատաստանագրքի դատական ապացույցներն են խոստովանությունը, վկաների ցուցմունքները, երդումը և այլն (գրավոր փաստաթղթեր, փորձագետի՝ գիտակ անձանց եղրակացություն....): Դատական ապացույցների շարքում խոստովանությունը՝ ապացույցների թագուհին, գրավում է երկրորդական տեղ (ինքնին շատ հետաքրքրական մի երևույթ միջնադարյան Եվրոպայի համեմատությամբ, որին այստեղ անդրադառնալ չենք կարող), երդումը կիրառվում էր առանձին դեպքերում: Ամենակարևոր ու գլխավոր ապացույցը վկաներն էին ու նրանց ցուցմունքները, որոնց մասին և խոսք կլինի ստորև:

Նախադրության մի ամբողջ գլուխ Մխիթար Գոշը նվիրել է վկաներին: Այդ գլխում և այլուր վկաների վերաբերյալ արված դատողությունները ի մի բերելով, կստանանք դրական և բացասական հատկանիշների մի շարք, որով Մխիթար Գոշը պայմանավորում է վկա լինել-չլինելու իրավունքը¹⁸:

Դրական հատկանիշներ են՝ ա) չափահասություն, բ) առողջ գիտակցություն, գ) բարոյական դրական նկարագիր (ազնվություն, ճշմարտասիրություն, անշահախնդրություն, անբասիր վարք և այլն), դ) արական սեռ, ե) քրիստոնեականություն:

Վկա կարող է լինել նա, ով միաժամանակ բավարարում է այս պահանջները:

Հատկանիշներ, որոնք զրկում են վկայելու իրավունքից կամ սահմանափակում այն և այդ տեսակետից բացասական են՝ ա) անչափահասություն, բ) անառողջ գիտակցություն, գ) բարոյական բացասական նկարագիր, դ) իգական սեռ, ե) ոչ ուղղափառություն, այլակրոնություն, զ) ազգակցություն:

Ընդհանուր պատկերացում կաղմելու համար մի քանի խոսք ասենք այս հատկանիշ-պահանջների մասին:

¹⁷ Նույն տեղում, էջ 31:

¹⁸ Տե՛ս նաև Յառաջարանություն, էջ 152: Karst, Kommentar, էջ 379 և հտ.:

Չափահասությունը: Դատաստանագիրքը սահմանում է. «վկայ հաւատարիմ քսանեւհինգ ամացն լիցի»¹⁹: Որպես կանոն 25-ից պակաս տարիք ունեցողը չէր կարող վկա լինել: Թույլատրելի են բացառություններ: Տուրևաոի գործերով վկա կարող էր լինել նաև 14 տարեկանը, երբ, ըստ Մխիթար Գոշի, հասնում է որդեծնության ընդունակությունը. «Զի թէ զանձն իւր եւ զսերմն վաճառել կնոջ եւ զկինն զնել յամուսնութիւն հաւատարիմ է, նոյնպէս հաւատարիմ լիցի ի տուրևաոս վաճառաց»²⁰: Ավելի ցածր տարիք ունեցողները առհասարակ չէին կարող վկա լինել: Ինչպես կտեսնենք ստորև, Դատաստանագրքի համաձայն, ընդունելի վկաների նվազագույն թիվը երկուսն է: 14—25 տարեկանները ընդհանուր գործերով կարող էին վկա լինել, եթե մեկ կամ երկու անչափահասի հետ կար նաև մեկ չափահաս կամ եթե անչափահասների թիվը երեքից պակաս չէր: Հին օրենքները, օրինակ՝ հռոմեական, հնդկական, գերմանական և այլն, ինչպես և նորերը, ինչ տարիք էլ որ սահմանած լինեն չափահասության կամ լրիվ չափահասության համար, վկայելու իրավույթը, ընդհանրապես, չեն սահմանափակում որևէ տարիքով, այլ վկայի մանկահասակությունը նկատի ունենալով, անհրաժեշտ զգուշություն են պահանջում նրա ցուցմունքները գնահատելիս և, չափահասների բացակայության դեպքում, այնուամենայնիվ, ընդունում են երեխաների ցուցմունքները: Հին հնդկական օրենքներում (Մանու), օրինակ, կարգում ենք. «(պատշաճ վկաների) բացակայության դեպքում ցուցմունք պետք է տա երեխան»²¹:

Առողջ գիտակցություն: Ինքնին ենթադրվող դրական այս հատկանիշի անհրաժեշտության մասին եզրակացություն է արվում անուղղակի ճանապարհով, որովհետև այդ կապակցությամբ Դատաստանագրքում ուղղակի վկայություններ չկան: Մասնավորապես այն փաստից, որ Գոշը վկայելու չի թույլատրում մթազնված գիտակցության որոշ վիճակում գտնվող անձանց, կարելի է եզրակացնել, որ առողջ գիտակցությունը անհրաժեշտ պայման էր վկա լինելու համար:

Բարոյական դրական նկարագիր: Մխիթար Գոշը գրում է. «Իսկ հաւատարմութիւն վկայիցն առաջիս՝ ի վարուց նոցա երեւի, զի բարի եւ ճշմարտախօսք իցեն եւ չիցեն կաշառօք եկեալ ի տեղի իրաւանցն եւ կամ ստախօսք»²², կամ՝ (կին) վկաները «չիցեն ի վատթարաց, այլ ճշմարիտք եւ վարուքն վկայեալք ի բաղմաց»²³ և այլն: Հին ու նոր օրենսդրությունները և դատական փորձն առհասարակ, ուղղակի կամ լուրջայն, մեծ ուշադրություն են դարձրել վկայի անձի բարոյական կողմի վրա: Տարբեր է եղել զանազան օրենսդրությունների վերաբերմունքն այս կապակցությամբ: Որոշ օրենսդրություններ, սովորաբար, նշել են վկայելու իրավունքից զրկող բարոյական բացասական հատկանիշներ և այդ տեսակէտից վկային դրական պահանջներ չեն ներկայացրել: Այսպես, օրինակ, հռոմեական օրենսդրությամբ չէր պահանջվում, որ վկայի բարոյական դրական նկարագիրը նախապես հայտնի լիներ կամ յուրաքանչյուր դեպքում առանձին կարգով հաստատվեր: Հռոմեական օրենսդրությունը վկայելու չէր թույլատրում միայն այն մարդուն, որի բարոյական բա-

¹⁹ Դատաստանագիրք հայոց, էջ 39:

²⁰ Նույն տեղում:

²¹ Ману, VIII, 70.

²² Դատաստանագիրք հայոց, էջ 37:

²³ Նույն տեղում, էջ 40—41:

ցասական նկարագիրը նախապէս հայտնի էր: Բայց բացասականի այդ հայտնիութիւնը խարսխված էր ոչ թէ ժողովրդի մեջ շրջող ասեկոսների առածական հիմքի վրա, այլ դատարանի վճռի: Որոշ օրենսդրութիւններ էլ վկայի անձի բարոյական կողմի նկատմամբ ունեն նույն վերաբերմունքը, ինչ որ Գոշը, այսինքն՝ ներկայացնում են դրական պահանջները: Հին հնդկական օրենքների համաձայն վկա կարող էր լինել նա, ով երեսներ ունեցող տանուտեր էր, տվյալ վայրի բնիկ-մշտական բնակիչ, վստահութիւն ներշնչող, դժարման իմացող, անշահախնդիր և այլն: Այս դեպքում ևս վկայելու իրավունքը պայմանավորված էր այդ հատկանիշների ամբողջութեան առկայութեամբ: Դատաստանագրքում, սակայն, մութ է մնում մի կետ. վկայութիւնն ընդունելուց առաջ դատարանն ինչպե՞ս էր որոշում վկայի բարոյական նկարագիրը: Յուրաքանչյուր դեպքում առանձին քննութիւն էր կատարում, թե՛ բավարարվում էր այդ մարդու մասին եղած և գուցե իրեն էլ հայտնի համբավով, որի հիմքը «բազմաց» կամ «աշխարհի» վկայութիւնն էր: Առաջին դեպքում դատավարութիւնը խիստ ձգձգելու հնարավորութիւն է ստեղծվում, որին Գոշը դեմ է սկզբունքորեն. երկրորդ շափանիշը ճիշտ չէ իրավաբանորեն, որովհետեւ բնավ չի բացառվում և իրականում հաճախ է լինում, որ մատահամբավ բարոյականութեան տեր մեկը, իրոք, ճիշտ ցուցմունք տա: Երբեմն, սակայն, վկայի բարոյական բացասական նկարագրի հայտնիութիւնը հիմնված էր մինչ այդ արդեն մի այլ գործով կայացված վճռի վրա:

Արական սեռ: Մխիթար Գոշն այն կարծիքին է, որ վկան պետք է անպայման տղամարդ լինի: Դա բխում է նրանից, որ նա չի թույլատրում վկա լինել կանանց: Հնում կնոջ իրավունքները, առհասարակ, սահմանափակված էին: Դրա արտահայտութիւններից մեկն էլ այն էր, որ միջնադարում, որպէս կանոն, կինը չէր կարող վկա լինել, եթէ չհաշվենք բացառիկ դեպքերը: Այդպէս էր մուսուլմանական իրավունքի բոլոր երկրներում, Բյուզանդիայում, Գերմանական երկրներում, մեր հարեան Վրաստանում, Հնդկաստանում և այլուր: Ուշագրավ է Մանուի օրենքներից մեկը. «Մեկ անշահախնդիր տղամարդը կարող է վկա լինել, ինչպէս և շարատավորված շատ ուրիշ տղամարդիկ, բայց ոչ կանայք, թեկուզ և ազնիւ, եթէ նույնիսկ նրանք շատ են — կնոջ մտքի տարափոխիկութեան պատճառով»²⁴: Մխիթարն էլ զրկում է կանանց, ի թիւս այլ պատճառների նաեւ «վասն դիրագրգութեանն»: Բայց Դատաստանագիրքը սահմանում է, որ «զկանանց վկայութիւնն ի վերայ կանանց ընդունել պարտ է»²⁵:

Դատաստանագիրքը նախատեսում է նաեւ այն դեպքը, երբ «կանայք միայն իցեն իրաց ինչ տեսողք և վկայք»²⁶: Այս դեպքում կանանց վկայութիւնն ընդունելի է, բայց «պարտ է զի կրկին իցեն նոքա քան զարսն, զի արանց վկայն երկու կամ երեք հրամայեցաւ, և նոքա լիցին չորս կամ վեց»²⁷: Այդուհանդերձ, կանայք «մի գայցեն յատեան, այլ ի տան պատմեսցեն նոյն թուովն՝ հաւատարիմ արանց, և նոքա եկեալ վկայեսցեն և ընդունելի լիցին»²⁸: Դատաստանա-

²⁴ Many, VIII, 77.

²⁵ Դատաստանագիրք հայոց, էջ 41:

²⁶ Նույն տեղում, էջ 40:

²⁷ Նույն տեղում, էջ 41:

²⁸ Նույն տեղում:

գրքի խմբագրություններից մեկը նկատի ունենալով կարելի է եզրակացնել, որ միջնադարյան Հայաստանում կանայք վկայելու իրավունք ունեին:

Կրոն: Ըստ Դատաստանագրքի քրիստոնյաների նկատմամբ վկայություն կարող են տալ միայն քրիստոնյաները, ըստ որում՝ հերձվածողների վկայությունը ուղղափառների նկատմամբ չի ընդունվում: Ընդունվում է մահմեդականների վկայությունը մահմեդականների նկատմամբ և հերձվածողներին՝ միմյանց նկատմամբ:

Ինչպես ասացինք, Դատաստանագրքի համաձայն, ընդունելի վկաների նվազագույն թիվը երկուսն է. «Երկու կամ երեք վկայիւք վճիռն հատցի»²⁹ և այլն: Վճիռը չի կարող հիմնվել մեկ վկայի, թեկուզ և հավատարիմ, ճշմարտախոս և այլ բարեմասնություններով օժտված անձի ցուցմունքների վրա. «Եւ թէպէտ միոյ վկայի հաւատարմի ճշմարիտ է վկայութիւնն, բայց ոչ հաստատ»³⁰: Այն տպավորությունը չստացվի, թե Դատաստանագիրքը չի ընդունում երեքից ավելի վկա, ընդհակառակը. «Երկու եւ երեքն ոչ եթէ զբաղումսն խափանէ, այլ ցուցանէ զի թէ բազումք իցեն՝ բարիոք է, եւ թէ ոչ՝ քան զայս պակաս մի լիցին»³¹: Ինչո՞ւ Մխիթար Գոշը չի ընդունում երկուսից պակաս վկա: Հայագիտական գրականության մեջ այս հարցին պատասխանել են: «Այս կարգը հիմնված է Մովսիսական համապատասխան օրենքի վրա»,— գրում է Կարստը:³² «Թե ինչու վկաների թիվը պետք է 2—3 լինի, Մխիթար Գոշը ճգնում է հիմնվել մի շարք օրինակների վրա, վերցնելով այդ Աստվածաշնչից ու Ավետարանից», ավելացնում է Խ. Սամուելյանը³³: Իրոք, Գոշը գրում է. «Զի Մովսիսի օրինացն տւելոթեան Ովր եւ Ահարոն եւ Յեսու վկայեն»³⁴, եւ ի Սինայ Աստուծոյ իջմանն — փողքն եւ ամպն եւ մէգն եւ հուրն վկայեն»³⁵ և այլն և այլն³⁶: Ինչպես տեսնում ենք, այս օրինակներից յուրաքանչյուրում վկաների թիվը երկուսից պակաս չէ: Թվում է, թե անվիճելի է, որ վկաների նվազագույն թիվը երկուս սահմանելու համար Մխիթար Գոշին մղում տվողը, իրոք, Մովսիսական օրենսդրությունն է, մանավանդ, որ այդ վերջինը ևս չի ընդունում մեկի վկայությունը³⁷: Մովսիսական այդ օրենքը նույնությամբ անցել է Նոր կտակարան⁸ և այստեղից էլ քրիստոնեական կանոնական օրենսդրություն³⁹: Սա դեռ բոլորը չէ: Վկաների նվազագույն թվի մասին Մովսիսական օրենքը (թեև Նոր կտակարանի միջոցով) պաշտոնապես ընդունվել ու օրենսդրորեն վավերացվել է նաև հայոց կողմից՝ Շահապիվանի աշխարհաժողովում⁴⁰: Վերջապես, Կղեմի վերոհիշյալ ԿԹ կանոնը Մխիթար Գոշը դարձրել

²⁹ Նույն տեղում, էջ 29:

³⁰ Նույն տեղում, էջ 44:

³¹ Նույն տեղում, էջ 42:

³² Kommentar, էջ 382:

³³ Խ. Սամուելյան, նշվ. աշխ., էջ 154:

³⁴ Ելք, ԻԻ, 14:

³⁵ Ելք, ԺԹ, 11—13, 16, 19, Ի, 18: Տե՛ս նաև Մատթևոս, Բ, 1—11, Ղուկաս, Բ, 8—20 և այլուր:

³⁶ Դատաստանագիրք հայոց, էջ 42—43:

³⁷ Տե՛ս Թիւք, 10, 30, Բ. յրին. Ժէ, 6, ԺԹ, 15:

³⁸ Տե՛ս Մատթևոս, ԺԸ, 16, Բ. կորնթ. ԺԳ, 1, Տիմոթ., Ա, Ե, 19 և այլուր:

³⁹ Տե՛ս օրինակ՝ Կանոնք Կղեմայ, ԿԹ, Կանոնգիրք հայոց, հատ. Ա, աշխատասիրությամբ Վ. Հակոբյանի, Երևան, 1964, էջ 94:

⁴⁰ Տե՛ս Կանոնգիրք հայոց, հատ. Ա, էջ 441:

է առանձին հոգւած⁴¹։ Թվում է, թե այլևս ոչ մի կասկած չի կարող լինել, որ ընդունելի վկաների նվազագույն երկու թիվը Դատաստանագրքում փոխառություն է Մովսիսական օրենսդրությունից։ Այնուամենայնիվ հարցը դրանով սպառնալից համարել չի կարելի։ Այդպես կարծելու բավարարաչափ հիմքեր կան։ Նախ, փոխառության տեսակետի ներկայացուցիչները, եթե ընդունենք էլ, որ տվյալ դեպքում առկա է փոխառություն, արձանագրում են փաստը միայն, առանց բացատրելու այն։ Մինչդեռ բացատրությունն անհրաժեշտ էր, թեկուզ, ցույց տալու համար, թե ինչու փոխառված է հենց տվյալ իրավագրույթը և իրավունքի հենց տվյալ համակարգից։ Այնուհետև. հայտնի է, որ իրավական բազմաթիվ իրողություններ նույն ձևով հանդիպում են իրավունքի տարրեր համակարգերում և տարբեր իրավակարգերում։ Այս բոլորը փոխառությամբ բացատրել, անշուշտ, դյուրին է, բայց ոչ միշտ ընդունելի կամ ճիշտ։ Էությունը միշտ չէ, որ ամբողջովին բացահայտվում է երևույթի մեջ, իսկ այս վերջինը երբեմն կարող է լինել տվյալ էության ոչ իսկական, այլ թվացող երևույթը։ Ընդունելի վկաների նվազագույն թվի մասին Մխիթար Գոշն անում է այնպիսի դատողություններ, որոնք ստիպում են մտածել այլ կերպ, քան մտածել են մինչ այժմ, ստիպում են բարձրացնելու աստվածահյուս շղարշը՝ Գոշի մտքի իրական պատկերը տեսնելու համար։ Ի վերջո, պրպտումները ցույց տվեցին, որ երկու վկան, որպես վկանների նվազագույն թիվ, ընդունված են եղել տարածությամբ ու ժամանակով իրարից շատ հեռու ընկած օրենսդրություններում, մի երևույթ, որը պարզապես չի կարող փոխառությամբ բացատրվել։ Այսպես. հին եգիպտական իրավունքով վկանների թիվը պետք է լիներ ոչ պակաս քան երկու։ Բսկ եգիպտական իրավունքը անհամեմատ հին է, քան Մովսիսականը։ Հռոմեական իրավունքի համաձայն վկանների թիվը նույնպես չէր կարող պակաս լինել երկուսից։ Իրավունքի այս համակարգը Մովսիսական օրենսդրությունից անկախ մշակել էր հայտնի սկզբունքը՝ *testis unus—testis nullus*— մեկ վկան վկա չէ։ Այդպես էր նաև հին հնդկական, գերմանական ժողովուրդների օրենքների համաձայն և այլն։

Ընդունենք, որ գոշյան օրենքը վկանների թվի մասին կաղապարված է, իրոք, Մովսիսականի օրինակով։ Բայց ինչո՞վ բացատրել նույն օրենքի գոյությունը թվարկված օրենսդրություններում. չէ՞ որ սրանց վրա հնգամայնյանի ազդեցությունը տվյալ դեպքում բացառվում է։ Ուրեմն, պետք է ընդունել, որ նշված օրենսդրությունները իրավական տվյալ դրույթին են հասել միանգամայն ինքնուրույն ճանապարհով և իրարից անկախ, համեմայն դեպս Մովսիսական օրենսդրությունից անկախ, հավանաբար սեփական իրավական կյանքի փորձն ամփոփելու միջոցով։ Արդ՝ հնարավոր չէ՞ մտածել, որ Մխիթար Գոշն էլ հասել է նույն մտքին հայկական իրավական կյանքի փորձն ամփոփելով։ Այս ենթադրությունը ամրապնդվում է, մանավանդ, հետևյալ հանգամանքով։ Եթե տարբեր վայրերում և տարբեր ժամանակներում իրարից անկախ հասել են իրավական միևնույն գաղափարին, նշանակում է՝ դա պայմանավորված է ոչ թե փոխառություններով կամ փոխազդեցություններով, այլ առարկայական պարագաներով։ Նշանակում է՝ տվյալ իրավադրույթը կանխորոշող հանգամանքները ընդհանուր բնույթ ունեն և, ուրեմն, միևնույն պատճառները ամենուր միևնույն հետևանքը պետք է առաջացնեն։ Որո՞նք

⁴¹ Տե՛ս Դատաստանագիրք հայոց, էջ 126։

են այդ պատճառները, ինչո՞վ և ինչպե՞ս է հիմնավորում Գոշը վկաների նվազագույն երկու թիվը, որ ընդունել է ինքը: Այդ պատճառները արտահայտված ու ձևակերպված եղե՞լ են Մովսիսական օրենսդրությունում, թե՞ սոսկ լուելյայն են գիտակցվել: Փոխառության տեսության կողմնակիցները չեն դրել այս հարցերը, այնինչ, դրանց պատասխանելուց հետո միայն կարող էր պարզվել փոխառության հանգամանքը:

Գոշը բացատրում է, թե ինչու չի ընդունում երկուսից պակաս վկա, և հենց այդ պատասխանն է նաև հաստատում, որ ընդունելի վկաների երկու թվի անցումը Դատաստանագրքի մեջ փոխառությունների տրորված ուղիներում չպետք է որոնել: Մխիթարը գրում է. «Ասացից թէ ընդէր երկու եւ երեք լինին վկայքն: Երկու եւ երեքն ոչ եթէ գրագումսն խափանէ, այլ ցուցանէ զի թէ բազումք իցեն՝ բարիօք է, եւ թէ ոչ՝ քան զայս պակաս մի լիցին, զի դիւրին է միոյն վասն ախաի ինչ շարախօսել, բայց երկուցն կամ երիցն ոչ է աշխատելու դիւրին»⁴²: Երկուսից պակաս վկա ընդունելու իրական պատճառը այն չէ, թէ «Ովր եւ Ահարոն եւ Յեսու վկայեն», կամ՝ «փողքն եւ ամպն եւ մէգն եւ հուրն վկայեն» և այլն: Սա Դատաստանագրքի օրենսդրական ուժի պակասը «Գովք լցնելու», «զնոցա գորութիւնն եւ զհրամանն» «վկա առնելու» օրինակներից մեկն է, որին Գոշը դիմում է ինչ-ինչ պատճառներով: Մխիթար Գոշը հաճախ է իր դատողությունները պարուրում Գրոց քողով: Այդ քողը տվյալ դեպքում թեև բավական թանձր է, բայց ոչ անթափանցելի, և ի վերջո տեսանելի է դառնում ինքը՝ Գոշը կամ գոշյանը, անկախ Ս. Գրքից և տարբեր Ս. Գրքից: Երկուսից պակաս վկա ընդունելու իրական պատճառն այն է, որ «դիւրին է միոյն վասն ախտի ինչ շարախօսել», իսկ երկու-երեքի դեպքում «ոչ է այնպես դիւրին»: Այս դատողությունն արդեն կապ չունի Ս. Գրքի հետ, համենայն դեպս դրա աղբյուրը Ս. Գիրքը չէ: Դա փորձ ամփոփոխ դատողություն է, փորձից արված ընդհանրացում, փորձ, որ ինքնին ընդհանուր էր: Իսկ այդ փորձը հենման երկու կետ ունի. դատա-իրավական կյանքը և Գոշի անձնական դիտումները մարդու հոգեբանության, երեւույթներն ընկալելու ու վերապատկերելու նրա ունակության հնարավորությունների վերաբերյալ, որոնց խոր իմացություն է ցուցաբերում Մխիթար Գոշը և որոնցով պայմանավորված է վկայի ցուցմունքների գնահատման հետ կապված շատ հարցերի լուծումը: «Չարախօսութեան» տակ պետք չէ անպայման հասկանալ շահագիտական միտումով ոչ-ճիշտ ցուցմունք տալը: Ամենաբարեխիղճ վկան էլ կարող է ոչ ճիշտ ցուցմունք տալ միանգամայն բարեխիղճ մոլորության հետևանքով, «վասն ախտի ինչ»: Բարեխիղճ մոլորությունը մարդկային է, մարդկային է նաև միտումնավոր շարախոսությունը, բայց «մարդկային» չէ՝ անարդարացի է մոլորության կամ շարախոսության վրա հիմնված դատապարտող վճիռը: Մարդիկ դա նկատել են վաղուց, շատ վաղուց և դատավճռի արդարացիությունը ապահովող ուղիներ են որոնել: Դատավճիռը ապացույցների հանրագումարն է, վճռի որակը հայտնի չափով արդեն կանխորոշված է ապացույցների որակով: Եվ որովհետև վկան ապացույցների շարքում, որպես կանոն, միշտ էլ առաջնակարգ տեղ է գրավել, այդ պատճառով իրավունքն ու իրավալիտությունը սկզբից ևեթ չափանիշներ են որոնել վկաների ցուցմունքները արժեքավորելու համար: Նկատ-

⁴² Նույն տեղում, էջ 42:

ված լինելով, որ մեկ վկային «դիրին է վասն ախտի ինչ չարախօսել» և որ հիմքում այդպիսի ապացույց ունեցող վճիռը նվազ համոզիչ է, իրավունքն ու իրավագիտակցությունը այլ միջոց չեն գտել և հաղիվ էլ կարողանային գտնել այն ժամանակ, քան այն, որ վճռի հավաստիության աստիճանը մեծացնելու համար մեծացրել են վկաների թիվը, որովհետև հրկու և երեք վկային «ոչ է այնպէս դիրին» «վասն ախտի ինչ չարախօսել», որովհետև որքան մեծանում է վկաների թիվը, այնքան նվազում է նրանց ցուցմունքների անհավաստի լինելու հավանականությունը և նույնքան էլ մեծանում է արդարացի վճիռ կա-
յացնելու հնարավորությունը: Հավանաբար, իրավական կյանքի սկզբից շա-
րունակ դիտվող այս փորձն է ընկած բոլոր այն հին օրենսդրությունների հիմ-
քում, որոնք չեն ընդունում երկուսից պակաս վկաների ցուցմունքներ⁴³: Վկա-
ների թվի հարցում այդ փորձն է ընկած նաև մեր Դատաստանագրքի և Գոշի
հայացքների հիմքում: Վկաների և նրանց ցուցմունքների մասին Գոշի դատո-
ղությունների հանրագումարը հայացքների մի համակարգ է, որ կարելի է
անվանել վկաների ցուցմունքների գնահատման ֆունկցիոնալ-որակային չափա-
նիշների տեսություն: Իրոք, եթե վերհիշենք Գոշի դատողությունները վկա-
ների վերաբերյալ, ապա զժվար չի լինի նկատել, որ դրանք պատվում են հիմ-
նականում երկու հարցի շուրջ՝ վկաների թիվը և վկաների անձը, հանգամանք-
ներ, որոնցով, ըստ Գոշի, ի վերջո պայմանավորված է վստահությունը նրանց
ցուցմունքների նկատմամբ: Մեկ անձի վկայությունը Գոշը չի ընդունում, են-
թադրելով, որ մի շարք պատճառներով՝ առարկայական թե ենթակայական,
դրական թե բացասական, նրա ցուցմունքը կարող է ճիշտ չլինել: Բայց վկայի
ցուցմունքի նկատմամբ վստահությունը մեծանում է և այն արժանահավատ
դառնում, եթե նույն փաստը վկայում են շատերը: Ըստ Գոշի, ուրեմն, վկայու-
թյան արժանահավատությունը համեմատական է վկաների քվին:

Մխիթար Գոշը ցանկալի է համարում յուրաքանչյուր դեպքի համար ունե-
նալ վկաների առավելագույն, բացարձակ թիվը. «զի թէ բազումը իցեն բարիօք
է», — գրում է նա: Բայց պատկերացնելով, որ դա անհնար է, հարցին մոտե-
նում է գործնականորեն և վկայության հավաստիության քանակային չափա-
նիշի ստորին սահմանը համարում է վկաների երկու-երեք թիվը: Բայց հարցը
դրանով սպառված չի համարում: Նա գիտակցում է, որ վկաների կատարյալ,
բացարձակ թվի գործնական անհնարինությունը մի այլ զժվարություն է
ստեղծում իրականում: Երկու-երեք վկաների ցուցմունքների համաձայնու-
թյունը կարելի է բացատրել նրանով, որ նրանց կողմից վկայվող փաստը,
դեպքը, իրոք, տեղի է ունեցել և դա է պատճառը, որ ցուցմունքները նույնա-
նում են: Դրա երաշխիքը այն է նաև, որ «երկուցն կամ երեցն ոչ է այնպէս
դիրին» «վասն ախտի ինչ չարախօսել»: Մխիթար Գոշը, սակայն, հասկանում
է, որ երկու-երեքի կողմից չարախոսելը սոսկ «այնքան էլ հեշտ չէ», ուրեմն,
գուցե և զժվարությամբ, բայց և այնպես միանգամայն հնարավոր է: Այդ դեպ-
քում երկու-երեք վկաների ցուցմունքների համաձայնությունը կարելի է բա-
ցատրել և այլ պատճառներով, օրինակ՝ շահախնդրություն, անձնական նկա-
տառումներ և այլն, չէ որ երկու-երեք հոգին այնքան էլ շատ չեն, որպեսզի այդ
հանգամանքները իսպառ բացառվեն: Այստեղ ահա, ըստ Գոշի, վճռական նշա-

⁴³ Գերմանական ժողովուրդների օրենսդրությունում դա պայմանավորված էր նաև գյու-
ղական համայնքով:

նակություն ունի վկայի անձը: Նթե վկան որպես մարդ ճշմարտասեր է, անշահախնդիր, անձնական նկրտումներից վեր և այլն, ուրեմն նրա ցուցմունքները արժանի են վստահության: Ըստ Գոշի, ուրեմն, վկայության արժանահավատությունը համեմատական է վկայի անձնական-բարոյական նկարագրին: Այժմ արդեն հասկանալի է դառնում այն բժախնդիր մանրակրկիտությունը, որ ցուցաբերում է Մխիթար Գոշը վկայի անձի նկատմամբ, պահանջելով նրանից բարոյական բարձր հատկություններ, որոնցով և պայմանավորում է վկայելու իրավունքը:

Մխիթար Գոշն, այսպիսով, վկաների ցուցմունքների դնահատման երկու չափանիշն է սահմանում. քանակային՝ վկաների թիվը և որակային՝ վկաների բարոյական դրական նկարագիրը: Այդ չափանիշները առանձին-առանձին կիրառվել չեն կարող և կազմում են մի ամբողջություն. չափանիշը իր իսկական իմաստով այդ երկուսի միասնությունն է:

Վկաների թիվը և բարոյական նկարագիրը սոսկ միջոց է, որով Մխիթար Գոշը որոշում է վկայության որակը:

Այսպիսով, միջնադարյան Հայաստանում դատական գործը հարուցվում էր մասնավոր մեղադրանքի կարգով, թեև որոշ հանցագործություններ հետապնդվում էին ի պաշտոնե:

Կողմերն իրենք էին ներկայանում դատարան: Նթե մեղադրյալը (պատասխանողը) խուսափում էր դատարան ներկայանալուց, իշխանության մարմինները ձեռնարկում էին համապատասխան միջոցներ:

Մխիթար Գոշի Դատաստանագիրքը տարբերում է քրեական և քաղաքացիական դատավարությունները:

Դատարանը կարող էր նախապես ծանոթանալ գործին, լսել կողմերին և այլն:

Մխիթար Գոշի Դատաստանագրքի համաձայն գործում էր կասկածյալի մեղավորության նախավարկածը:

СУДОПРОИЗВОДСТВО В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЕНИИ

Х. А. ТОРОСЯН

(Р е з ю м е)

В средневековой Армении судебный процесс возбуждался в порядке частного обвинения, хотя некоторые преступления преследовались ex officio. В роли частного обвинителя могли выступить потерпевший или его ближайшие родичи. Стороны сами являлись в суд. В случае необходимости обвиняемого, уклоняющегося от явки, приводили в суд органы власти. Судебник Мхитара Гоша отличает гражданский процесс от уголовного. Суд предварительно мог ознакомиться с делом, выслушать показания сторон и т. д. По уголовным делам действовал принцип презумпции виновности подозреваемого. Судебными доказательствами были: признание обвиняемого, показания свидетелей, присяга (в некоторых случаях), документы, заключения сведущих лиц — экспертов. Число свидетелей не могло быть меньше двух.